

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

«---» «-----» 2017թ.

N---Ա

**ՈՐՈՇՈՒՄ**

**ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ  
ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 21-ի «Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2017 թվականի ծրագրի վերաբերյալ» հ.648-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետով՝

**Երևան քաղաքի ավագանին որոշում է.**

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին՝ Երևան համայնքի սեփականություն համարվող Մալաթիա-Մեքաստիա վարչական շրջանի Բաբաջանյան փողոցի հ.26/4 շենքի հ.10՝ 67.0 քմ ընդհանուր մակերեսով բնակարանը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.26052016-01-0208 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Մանուշակ Հովհաննիսյանին, Արմեն Հովհաննիսյանին, Գևորգ Արմենի Հովհաննիսյանին, Մանուշակ Արմենի Հովհաննիսյանին և Օֆելյա Մանուկյանին:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ**

**Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

## ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

### «ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Նախագծով առաջարկվում է Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Բաբաջանյան փողոցի **հ.26/4** շենքի **հ.10` 67.0** քմ ընդհանուր մակերեսով բնակարանը սեփականության իրավունքով, անհատույց օտարել (սվիրել) Մանուշակ Հովհաննիսյանին, Արմեն Հովհաննիսյանին, Գևորգ Արմենի Հովհաննիսյանին, Մանուշակ Արմենի Հովհաննիսյանին և Օֆելյա Մանուկյանին:

Քննարկվող բնակարանը, համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման **հ.26052016-01-0208** վկայականի տվյալների, հանդիսանում է Երևան համայնքի սեփականությունը:

Բաբաջանյան փողոցի **հ.26/4** շենքի **հ.10** բնակարանը նախկինում վարձակալության իրավունքով հատկացված է եղել Մանուշակ Հովհաննիսյանի ամուսնուն՝ Գևորգ Հովհաննիսյանին /հիմք՝ Երևանի քաղաքապետի **11.12.2007**թ. **հ.5382**-Ա որոշում/ և սահմանված կարգով օգտագործման իրավունքը գրանցված է եղել: Հետագայում, բնակարանը չի մասնավորեցվել, իսկ Գևորգ Հովհաննիսյանը մահացել է /հիմք՝ **02.06.2015**թ. **հ.215402** մահվան վկայական/:

Մանուշակ Հովհաննիսյանը, իր հինգ անձից բաղկացած ընտանիքով սկսած **2008** թվականից փաստացի բնակվում /հիմք՝ «Մալաթիա» համատիրության **07.02.2017**թ. **հ.283** տեղեկանք/ և **2011** թվականից հաշվառված են Բաբաջանյան փողոցի **հ.26/4** շենքի **հ.10** բնակարանում /հիմք՝ ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության Մալաթիա անձնագրային բաժանմունքի **08.07.2016**թ. **հ.22/6-2544** տեղեկանք/:

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի ստորաբաժանման ղեկավարի **13.02.2017**թ. **հ.հ.ԼԱ-2/1400**, **ԼԱ-2/1402** և **ԼԱ-2/1446** գրությունների համաձայն՝ Մանուշակ Հովհաննիսյանի, Արմեն Հովհաննիսյանի, Գևորգ Արմենի Հովհաննիսյանի, Մանուշակ Արմենի Հովհաննիսյանի և Օֆելյա Մանուկյանի անվամբ Հայաստանի Հանրապետությունում որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ և վերջին հինգ տարվա ընթացքում նշված քաղաքացիների կողմից կնքված անշարժ գույքի օտարման և ձեռք բերման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցում Հայաստանի Հանրապետությունում կատարված չէ:

Երևան քաղաքի ավագանու **2016** թվականի դեկտեմբերի **21**-ի **հ.648**-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ **3**-րդ կետի համաձայն՝ Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքը կարող է անհատույց օտարվել միայն Երևան քաղաքի ավագանու որոշմամբ, բացառությամբ՝ Ծրագրի **4**-րդ կետի:

Ծրագրի **4**-րդ կետով նախատեսված իրավական և /կամ/ փաստական հանգամանքների առկայության դեպքում Երևան քաղաքի սեփականություն համարվող բնակարանները, բնակելի տները և բնակելի տարածքները կարող են սեփականության իրավունքով անհատույց փոխանցվել քաղաքացիներին Երևանի քաղաքապետի որոշմամբ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ դեպքում բացակայում են Երևան քաղաքի ավագանու **2016** թվականի դեկտեմբերի **21**-ի **հ.648**-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ **4**-րդ կետի **1**-ից **7**-րդ ենթակետերով նախատեսված իրավական և /կամ փաստական հանգամանքները, ուստի՝ անհրաժեշտություն է առաջացել ընդունելու համապատասխան որոշում:

## Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

**«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՍՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ**

**Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

## Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

**«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ  
ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ  
ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ  
ԲԱՑԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ**

**Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**